

Ժողովուրդ

26 մայիսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

66
(3275)

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԱՆՐԱՍԿԱՆԱԼԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԶԲԱԳՎԱԾ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ՀՀ առողջապահության նախարարության օրենսդրական փոփոխություններից հետո, երբ հիվանդանոցների տնօրենների համար բժշկական կրթությունը այլևս պարտադիր չէ, առողջապահական համակարգում ձեւավորվել է նոր, ուշագրավ պրակտիկա. պետական ենթակայության մի շարք բժշկական կենտրոնների ղեկավարներ ընդունվել են ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի» կլինիկական օրդինատուրա՝ «Հանրային առողջապահություն» մասնագիտությամբ: Խոսքը 1 տարի 2 ամիս տեւողությամբ առկա ուսուցման մասին է, որի ընթացքում, ըստ գործող կարգի, ուսանողները պետք է մասնակցեն կրթական գործընթացներին՝ միաժամանակ շարունակելով իրենց մասնագիտական եւ վարչական պարտականությունները՝ ղեկավարելով բժշկական կենտրոններ, իսկ որոշ դեպքերում՝ նաեւ ներգրավված լինելով քաղաքական գործընթացներում:

Այս համատեքստում բարձրացված հարցերին ի պատասխան՝ «Առողջության իրավունք» ՀԿ նախագահ Անուշ Պողոսյանի կողմից հնչեցված մտահոգություններին՝ Առողջապահության ազգային ինստիտուտը պարզաբանել է, որ կրթական գործընթացները կազմակերպվում են «ուշ ժամերին» եւ հանգստյան օրերին: Սակայն հենց այս պարզաբանումը, ըստ էության, չի փակում հարցերը, այլ նոր հարցեր է առաջացնում՝ ինչպես է իրականում կազմակերպվում առկա ուսուցումը, եթե ուսանողները միաժամանակ զբաղեցնում են բարձր պատասխանատվության կառավարչական պաշտոններ:

«Ժողովուրդ» օրաթերթի հարցերին ի պատասխան՝ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը նշել է, որ նման իրավիճակն ընդունելի չէ եւ պետք է մակրամասն ուսումնասիրվի: «Պետք է ծառայողական քննությամբ եւ այլ ձեւերով պարզաբանվի, պետք է ճշտվի», - արձագանքել է նախարարը՝ անդրադառնալով հարցին, թե արդյոք ընդունելի է հիվանդանոց ղեկավարելու ընթացքում առկա կրթական գործընթացում ձեւական կամ ոչ լիարժեք մասնակցությունը: Նախարարը նաեւ նշել է, որ ընկալյալ ուսուցման հարթակներ գոյություն ունեն, որոնք պահպանվել են դեռեւս քովի ժամանակաշրջանից եւ շարունակում են կիրառվել, սակայն ընդգծել է. «Եթե ինչ-որ մեկը առկա դասընթացի մեջ չի մասնակցում, դա անընդունելի է»:


Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Վարչական ռեսուրսի հնարավոր չարաշահման վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պատասխանը ոչ թե պարզաբանում է տալիս, այլ ցուցաբերում է պետական ինստիտուտների ամենավտանգավոր արատներից մեկը՝ պատասխանատվությունից համակարգված խուսափումը: Հանձնաժողովը փաստացի չի վիճարկում, որ նախընտրական ելույթի ընթացքում օգտագործվել է ԱԼԾ տնօրենի հաղորդած տեղեկատվություն: Չի էլ փորձում գնահատել՝ արդյոք վարչապետի պաշտոնակատարի կողմից ուժային կառույցից ստացված տվյալների հրապարակային օգտագործումը կարող էր դիտարկվել որպես պաշտոնեական դիրքի առավելություն: Փոխարենը ամբողջ պատասխանը կառուցված է մեկ գաղափարի շուրջ. «Դա մեր լիազորությունից դուրս է»: Սակայն այստեղ առաջանում է հիմնարար հարց. եթե վարչական ռեսուրսի, պաշտոնեական դիրքի եւ պետական լծակների կիրառման քաղաքական զգայուն դեպքերում հենց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հրաժարվում է նյութական գնահատական տալուց, ապա ո՞րն է այդ մարմնի իրական գործառնությունը: Հատկանշական է նաեւ, որ հանձնաժողովը հղում է անում սեփական՝ 2026 թվականի որոշմանը, ըստ որի՝ նախ պետք է վարչական դատարանը հաստատի իրավախախտումը, եւ միայն դրանից հետո իրենք կարող են անդրադառնալ էթիկական բաղադրիչին:




Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Ի շխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախկին ակտիվ ներկայացուցիչներից Հայկ Ցիրունյանն այս ընտրություններին այլևս չկա նախընտրական ցուցակում: Բայց մինչ քաղաքական դաշտից նրա լուռ հեռանալը, վերջին տարիներին նկատելիորեն աճել է նրա ունեցվածքը: Եթե 2021 թվականին պատգամավորը հայտարարագրում նշում էր, որ չունի ոչ բնակարան, ոչ հողամաս, ոչ էլ մեքենա, ապա ընդամենը մի քանի տարվա ընթացքում նրա գույքային պատկերը կտրուկ փոխվել է. հայտարարագրերում հերթով հայտնվել են հողամասեր, ամառանոց, թանկարժեք ավտոմեքենա, կրիպտոարժույթ եւ միլիոնավոր դրամների կանխիկ միջոցներ: Ցիրունյանը ՏՏ ոլորտից քաղաքականություն եկած գործիչներից էր: Դեռ 2001-ից աշխատել է որպես ծրագրավորող տարբեր ընկերություններում, իսկ 2014-2020 թվականներին եղել է «Matersson» ընկերության համահիմնադիրն ու տնօրենը: 2018-ին հայտնվեց Երեւանի ավագանու «Իմ քայլը» խմբակցությունում, ապա 2020-ից դարձավ Ազգային ժողովի պատգամավոր, իսկ 2021-ին կրկին մանդատ ստացավ արդեն ԶԳ ցուցակով: Սակայն այս ընտրություններին նրա անունը ցուցակում չկա:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Սիկո Փաշինյանն ընտրություններից անմիջապես հետո նախատեսում է ներկայանալ Ազգային ժողով: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ վարչապետը խորհրդարան է գնալու հենց ընտրությունների հաջորդ առավոտյան: Պատճառը 2025 թվականի պետական բյուջեի կատարողականի ներկայացումն է: Իշխանությունը պարտավոր է Ազգային ժողովին ներկայացնել բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, եւ այդ գործընթացը կմեկնարկի հունիսի 8-ից՝ ԱԺ մշտական հանձնաժողովներում: Ըստ մեր տեղեկությունների՝ առաջին գեկուցողը լինելու է վարչապետ Սիկո Փաշինյանը, որը հունիսի 8-ի առավոտյան խորհրդարանում կներկայացնի կառավարության կատարած աշխատանքը եւ բյուջեի կատարման հիմնական ցուցանիշները: Դրանից հետո կառավարության անդամները հերթով կներկայացնեն իրենց ղեկավարած գերատեսչությունների հաշվետվությունները՝ ամփոփելով ոլորտային զարգացումներն ու կատարված աշխատանքը: Մեզ հասած տեղեկություններով՝ նախատեսվում է բյուջեի կատարողականի քննարկումները շարունակել մինչեւ հունիսի 15-ը: Դրանից հետո հաշվետվությունը կընդգրկվի Ազգային ժողովի հերթական նիստի օրակարգում:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՌՑԱԳՐՈՒՅՑ

«ՊԵՏՔ Է ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵՆՔ»

ArmLur.am-ի գրուցակիցը «Օրան» բարեգործական կազմակերպության հիմնադիր-սնորհն Արմինե Հովհաննիսյանն է: Հունիսի 1-ին՝ երեխաների դաստիարակության օրվան ընդառաջ մի քանի հարցեր ենք ուղղել Արմինե Հովհաննիսյանին:

- Տիկին Հովհաննիսյան, այսօրվա երեխաների վերաբերյալ Ձեզ ամենից շատ ի՞նչն է մտահոգում:

- Ես ավելի շատ մտահոգված եմ մեծահասակներով, նրանց արժեքներով եւ վարքագծով, քան երեխաներով: Մեծահասակները պետք է լինեն օրինակ եւ դերային մոդել իրենց երեխաների համար, սակայն այսօր, ցավոք, հանրային դաշտում ականատես ենք լինում հանրային դեմքերի կողմից դրսեւորվող վարքագծի, որը լիովին անբարոյական, կոպիտ եւ անընդունելի է: Եւ անկասկած, դա իր ազդեցությունն է թողնում երեխաների վարքագծի վրա: Մենք պետք է տեսնենք ուղիղ կապը հանրային կյանքում տեղի ունեցողի, հասարակական խոսույթի եւ դպրոցներում բուլլինգի, կռիվների եւ նույնիսկ մահվան դեպքերի աճի միջեւ:

- Ի՞նչ պետք է արվի:

- Մեզանից յուրաքանչյուրը պետք է սկսի պատասխանատվություն կրել ոչ միայն այսօրվա աշխարհի, այլ նաեւ այն աշխարհի համար, որը թողնում ենք վաղվա սերնդին: Մենք պետք է մեր երեխաներին սովորեցնենք բարոյական արժեքներ, հանդուրժողականություն, կարեկցանք, հարգանք, ազնվություն եւ պատասխանատվություն: Սակայն միայն խոսքերով դաստիարակելը բավարար չէ: Երեխաները շատ ավելի շատ բան են սովորում այն ամենից, ինչ տեսնում են, քան այն ամենից, ինչ իրենց ասում են: Շնորհից, ուսուցիչները, պետական պաշտոնյաները, մեդիայի ներկայացուցիչները եւ համայնքային առաջնորդները պետք է գիտակցեն, թե որքան մեծ ազդեցություն ունեն երիտասարդ մտքերի վրա: Երբ երեխաները մշտապես ականատես են լինում զայրույթի, վիրավորանքների, անհանդուրժողականության, անազնվության եւ ագրեսիայի հանրային կյանքում, նրանք սկսում են նման վարքագիծը ընդունել որպես նորմալ: Իսկ երբ տեսնում են բարոյություն, արժանապատվություն, կարեկցանք եւ հարգանք, ավելի հավանական է, որ այդ արժեքները տեղափոխեն իրենց սեփական կյանք:



Այսօրվա երեխան պետք է մեծանա խաղաղ աշխարհում լինելով առողջ, շրջապատված սիրով ու հոգատարությամբ: Նա պետք է դաստիարակվի մարդկային արժեքներով եւ կրթվի, որպեսզի մրցունակ լինի այս ժամանակակից թվային աշխարհում:

Մեր կրթական համակարգը հետ է մնում ժամանակի պահանջներից, որովհետեւ մենք արագ չենք արձագանքում թվային աշխարհի կարիքներին: Մասամբ դա պայմանավորված է ռեսուրսների պակասով, բայց մասամբ նաեւ նրանով, որ մենք չափազանց հարմարվել ու հարմարվել ենք զգում ներկայիս համակարգում:

- Ի՞նչ կասե՞ք այս օրը փոքրիկ երեխանին:
- Ապրիլ թո կյանքը ստեղծելու, ոչ թե քանդելու համար: Ապրիլ այնպես, որ ավելացնես աշխարհի հարստությունը, ոչ թե սպառես բնական պաշարները: Սիրիր եւ հարգիր մարդկանց, որովհետեւ նրանք մտածո անզնահատելի պարզեւն են մեզ:

Ջրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՐԱՍՅԱՆԸ

ԱՅՍԻ ԶԻ ԱՇԽԱՏՈՒՄ

2026 թվականի մայիսի 21-ի կառավարության նիստում ՀՀ կառավարությունը որոշել է զստացնել 65 մին դրամ՝ արդեն փաստացի կատարված դեղորայքային ծախսերը փոխհատուցելու նպատակով:

Սա արվում է, որպեսզի մինչեւ հունիսի 7-ի ընտրությունները առողջապահության համընդհանուր ապահովագրության ծրագիրը աշխատի, որ մարդիկ ԶԳ-ից գոհ լինեն, գնան ընտրության: Թե հետոն ինչ կլինի, պարզ չէ:

Կառավարության նախորդ շաբաթվա որոշումը փաստացի արձանագրում է, որ դեռ տարվա կեսին չհասած՝ դեղորայքի համար նախատեսված բյուջեն բավարար չի եղել, եւ կառավարությունը ստիպված է եղել դիմել պահուստային ֆոնդի միջոցներին:

Այդ ֆոնդն, սակայն, իշխանությունները շարունակում են հանրությանը ներկայացնել առողջապահական ապահովագրության համակարգը որպես «կայուն», «կառավարվող» եւ «աննախադեպ» բարեփոխում:

Մինչդեռ դեղորայքային ծախսերի նման արագ սպառումը վկայում է ոչ թե առանձին տեխնիկական խնդրի, այլ ոլորտային

պլանավորման եւ կառավարման խորքային բացերի մասին:

2026 թվականի մայիսի 21-ի կառավարության նիստում ՀՀ կառավարությունը հերթական անգամ ստիպված եղավ պահուստային ֆոնդից լրացուցիչ միջոց հատկացնել Առողջապահության նախարարությանը՝ դեղորայքային արդեն կատարված ծախսերը փակելու համար:

Սակայն սա առաջին դեպքն է:

Հիշեցնենք, որ առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ներդրման եւ առողջապահական ծրագրերի ֆինանսավորման համար իշխանությունները նախկինում եւս դիմել են թե՛ պահուստային ֆոնդի միջոցներին, թե՛ արտաքին վարկային ռեսուրսների ներգրավմանը: Մասնավորապես՝ 2024 թվականին հայտարարվեց, որ առողջապահական ոլորտի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է ներգրավել 102 մլն եվրոյի վարկային միջոց: Այդ մասին գրել էր նաեւ ArmLur.am-ը՝ «Վարկով առողջապահություն. 102 մլն վարկ՝ առողջության համընդհանուր ապահովագրության համար» հրապարակման մեջ: Հոգվածում ներկայացված էին նաեւ վարկի պայմանները՝ լողացող տոկոսադրույքով եւ լրացուցիչ վճարներով:

Այս ֆոնդի հատկապես ուշագրավ է, որ դեռ տարվա կեսին չհասած՝ կառավարությունը կրկին ստիպված է դառնում օգտագործել պահուստային ֆոնդի միջոցները՝ դեղորայքային ծախսերը փակելու համար:

Մինչդեռ հանրությանը շարունակվում է ներկայացվել «կայուն», «կառավարվող» եւ «աննախադեպ» համակարգի պատկեր:

Սակայն երբ համակարգը դեռ մեկնարկային փուլում արդեն պահանջում է՝ լրացուցիչ բյուջետային ներարկումներ, պահուստային ֆոնդի ներգրավում, ինչպես նաեւ բազմամիլիոնանոց արտաքին վարկեր,

ապա խոսքն արդեն ոչ թե առանձին տեխնիկական խնդրի, այլ առողջապահական ֆինանսավորման համակարգային ճգնաժամի ռիսկերի մասին է:

Առողջապահությունը PR-ով չեն կառավարում: Երբ դեղորայքային քաղաքականությունը ֆինանսապես «չի դիմանում» դեռ տարվա առաջին կեսին, հասարակությունը իրավունք ունի ստանալու ոչ թե հերթական գեղեցիկ ձեւակերպումներ, այլ հստակ պատասխաններ՝ ինչպես է ապահովվելու համակարգի երկարաժամկետ կայունությունը:

Իսկ իրականում հունիսի 7-ի ընտրություններից հետո ԱՅԿ համակարգի տապալման ռիսկերը շարունակ աճում են:

ՊԱՏՈՒՐԱՍ Է ԳԱՐՁԵԼ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ArmLur.am պարզեց, որ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել մի նախագիծ, որով փորձում է լուծել կենսաթոշակների եւ նպաստների՝ բացառապես անկանխիկ եղանակով վճարման հետեւանքով առաջացած խնդիրները:

Հիշեցնենք, որ 2026 թվականի ապրիլի 1-ից Հայաստանում ներդրվել է կենսաթոշակների եւ պետական նպաստների ամբողջությամբ անկանխիկ վճարման համակարգը: Սակայն գործնականում պարզվել է, որ հատկապես տարեց եւ առողջական խնդիրներ ունեցող բազմաթիվ քաղաքացիների համար այդ համակարգը ոչ թե հեշտացրել, այլ բարդացրել է կյանքը:

Խոսքը հիմնականում 75 տարեկանից բարձր, ինչպես նաեւ հաշմանդամության ծանր կամ խորը աստիճան ունեցող շահառուների մասին է, որոնք հաճախ չեն կարողանում ինքնուրույն օգտվել բանկային ծառայություններից: Խնդիրներ են առաջացել քարտերի արգելափակման, PIN կոդերի վերականգնման, կորցրած քարտերի վերաթողարկման, բանկում մատնետրում քարտերի առգրավման եւ այլ հարցերում:

Փաստորեն, իշխանությունների կողմից ներկայացված «թվայնացված» համակարգը շատ թոշակառուների համար վերածվել է հավելյալ քաջքուկի: Շատ տարեցներ ստիպված են եղել օգնության դիմել հարազատներին կամ երկար ժամանակ անցկացնել բանկերում անգամ ամենապարզ գործողությունների համար: Այս իրավիճակում կառավարությունը հիմա առաջարկում է նոր մեխանիզմ ներդրել. սոցիալական ծառայության ներկայացուցիչները կկարողանան շահառուների անունից բանկային որոշ գործողություններ իրականացնել, այդ թվում՝ պայմանագիր կնքել եւ աջակցել բանկային հիմնական ծառայություններից օգտվելիս:

Նախագծով նախատեսվում է, որ նման աջակցությունը կլինի անվճար, իսկ շահառուն ցանկացած պահի կարող է հրաժարվել այդ տարբերակից եւ ինքնուրույն օգտվել ծառայություններից:

Նախարարության գնահատմամբ՝ տարեկան շուրջ 15-20 հազար քաղաքացի կարող է օգտվել այս մեխանիզմից:

Փաստացի, կառավարությունը ընդունում է, որ կենսաթոշակների ամբողջական անկանխիկացման գործընթացը ներդրվել է առանց բավարար հաշվարկելու, թե որքան հասանելի կլինի այն ամենախոցելի խմբերի համար:

Սակայն նույնիսկ այս փոփոխություններից հետո հարց է մնում, թե գործնականում որքան արդյունավետ կաշխատի նոր համակարգը, եւ արդյոք այն իսկապես կթերթեւացնի տարեց ու խնդիրներ ունեցող քաղաքացիների առօրյան, թե պարզապես հերթական բյուրոկրատական միջանկյալ օղակը կդառնա:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԴՐԱՄՆԵՐԻ ԸՆԹԺ



41 ՏՈՒՆՍԸ ԳԵՄ Է TRIPP-ԻՆ

Միջազգային հանրապետական ինստիտուտի՝ International Republican Institute (IRI) անցկացրած հարցման համաձայն՝ TRIPP հռչակագրի իրականացմանը դեմ քաղաքացիների շրջանում գլխավոր մտահոգությունը անվտանգությունն է: Հարցվածների 21 տոկոսը որպես հիմնական թերություն նշել է անվտանգության բացակայությունը, իսկ 19 տոկոսը մտահոգություն է հայտնել «թշնամի երկրների քաղաքացիների ազատ մուտքի» հնարավորության վերաբերյալ: Հարցվածների 12 տոկոսը նշել է, որ չի վստահում Ադրբեյջանին, իսկ 10 տոկոսը կարծում է, որ կա Սյունիքի կորստի վտանգ: Եւս 9 տոկոսը մտավախություն ունի, որ Ադրբեյջանը կարող է նոր տարածքային պահանջներ ներկայացնել: Հարցվածների 7 տոկոսը նշել է, որ Հայաստանը ճանապարհի նկատմամբ վերահսկողություն չի իրականացնելու, իսկ 6 տոկոսը TRIPP-ի դրույթները համարել է Հայաստանի համար անբարենպաստ: Միաժամանակ 6 տոկոսը կարծում է, որ ԱՄՆ-ը վստահելի գործընկեր չէ, եւս 6 տոկոսը մտահոգություն է հայտնել անկախության կորստի վտանգի վերաբերյալ: Հարցվածների 4 տոկոսը նշել է, որ կարող են վատթարանալ հարաբերությունները Իրանի հետ, 2 տոկոսը՝ Ռուսաստանի հետ: Եվս 1 տոկոսը դժգոհել է եկամուտների անհավասար բաշխումից: Հարցվածների 14 տոկոսը նշել է, որ որեւէ խնդիր չի տեսնում, իսկ 1 տոկոսը դժվարացել է պատասխանել: Միեւնույն ժամանակ, հարցման համաձայն, քաղաքացիների 44 տոկոսը աջակցում է TRIPP հռչակագրի իրականացմանը, իսկ 41 տոկոսը՝ դեմ է: Հարցվածների 6 տոկոսը նշել է, որ առաջին անգամ է լսում դրա մասին, եւս 8 տոկոսը դժվարացել է պատասխանել կամ հրաժարվել է պատասխանել հարցին:

Ա. Վ.

ԳԱԶԻ ԳԻՆԸ «ԱՎԵԼԻ ԶԱՆ ԱՐՏՈՆՅԱԼ Է»

Ռուսական գազի գինը Հայաստանի համար «ավելի քան արտոնյալ է», սակայն դա կփոխվի, եթե Երեւանը դուրս գա ԵԱՏՄ-ից: Այս մասին հայտարարել է Ռուսաստանի Նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պետկովը, հաղորդում է TACC-ը: «Ռուսաստանը հուսալի էներգակիր մատակարար է, հատկապես իր գործընկերների համար: Մենք լսել ենք Հայաստանի ղեկավարության հայտարարությունները, որ ռուսական գազի եւ ռուսական էներգիայի համար կա շատ, շատ գրավիչ, ավելին, քան արտոնյալ գին: Սա իսկապես ճիշտ է. Ռուսաստանը մնում է հուսալի եւ պատասխանատու էներգակիր մատակարար բոլոր երկրների, եւ հատկապես իր ամենամոտ դաշնակիցների եւ գործընկերների համար», - ընդգծեց Կրեմլի խոսնակը: Միեւնույն ժամանակ, Պետկովը նշեց, որ «նման ռեժիմ անհնար է այլ ինտեգրացիաների մասնակիցների համար»՝ նկատի ունենալով «Իհարկե, Եվրոպական Միությունը»: «Այնտեղ գնազոյացումը բոլորովին այլ է՝ այն շուկայական է: Մեր ընկերները Երեւանում լավ գիտակցում են դա», - եզրափակեց նա: Հիշեցնենք, որ օրեր առաջ ArmLur.am-ը գրել էր, որ գազի գին բարձրացում է սպասվում:

ArmLur.am-ը ուսումնասիրել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրադարակած տեղեկանքը՝ հասկանալու համար, թե 2026 թվականի մայիսի 15-19-ն ընկած ժամանակահատվածում ինչ ֆինանսական արժեք են ունեցել ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցություններն ու դաշինքները, ովքեր են ստացել ամենաբարձր ցուցանիշները, որքան զույգ են փոխանցել նախընտրական հիմնադրամներ եւ ինչ ծախսեր են իրականացրել:

Խոշոր ֆինանսական շրջանառություն է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը: Այն ստացել է 73 մլն 731 հազար 869 դրամ նվիրատվություն՝ 161 անձից, ինչպես նաեւ 647 հազար 150 դրամ անդամավճար՝ 51 անձից: Ծախսերը կազմել են ավելի քան 4 մլն 426 հազար դրամ, որից 3 մլն 385 հազար 415 դրամը՝ այլ ելքեր, 512 հազար 500 դրամը՝ կոմունալ վճարներ, 500 հազար դրամը՝ գույքի վարձակալության վճարներ, իսկ 28 հազար 100 դրամը՝ ապրանքանյութական արժեքների ձեռքբերման համար: Կուսակցության հաշվին մնացել է 120 մլն 500 հազար 947 դրամ:

Խոշոր ֆինանսական շարժ գրանցել է նաեւ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը. այն ստացել է 87 մլն 449 հազար դրամ նվիրատվություն՝ 38 անձից: Բացի այդ, կուսակցության հաշվին վերադարձվել է եւս 95 հազար 294 դրամ Ֆեյսբուքից: Ծախսերը կազմել են 22 մլն 814 հազար 807 դրամ, որից 17 մլն դրամը վճարվել է կրեդիտորական պարտքի համար, 4 մլն 164 հազար 807 դրամը՝ Ֆեյսբուքի գովազդի, իսկ 650 հազար դրամը՝ Կոտայքի եւ Սյունիքի մարզերում գտնվող 3 անշարժ գույքերի վարձակալության համար: Մայիսի 19-ի դրությամբ կուսակցության հաշվին մնացել է 172 մլն 718 հազար 985 դրամ:

«Առաջ աջակցություն» կուսակցությունը ստացել է 22 մլն 999 հազար դրամ նվիրատվություն՝ 6 անձից: Ծախսերը կազմել են 3 մլն 580 հազար 240 դրամ, որից 3 մլն 120 հազար 423 դրամը՝ Ֆեյսբուքի գովազդի համար, իսկ 340 հազար 757 դրամը՝ կոմունալ վճարների: Մնացորդը կազմել է 23 մլն 587 հազար 564 դրամ:

«Հանրապետություն» կուսակցությունը ստացել է 14 մլն 523 հազար 200 դրամ պետական ֆինանսավորում եւ 2 մլն 10 հազար դրամ փոխանցել է նախընտրական հիմնադրամ: Մնացորդը կազմել է 14 մլն 75 հազար 529 դրամ:

«Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների» դաշինքը ստացել է 3 մլն 320 հազար դրամ նվիրատվություն՝ 3 անձից եւ կատարել ընդամենը 1 հազար դրամ սպասարկման վճար: Հաշվին մնացել է 12 մլն 817 հազար 614 դրամ:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը ստացել է 5 մլն 150 հազար դրամ նվիրատվություն՝ 4 անձից, ինչպես նաեւ 1 մլն 800 հազար դրամ որպես հաշվի համալրում: Ծախսերը կազմել են 5 մլն 339 հազար 425 դրամ, որից 3 մլն 500 հազար դրամը փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, իսկ 1 մլն 839 հազար 425 դրամը՝ Google-ի եւ Facebook-ի գովազդի համար: Մնացորդը կազմել է 7 մլն 962 հազար 621 դրամ:

«Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը ստացել է 3 մլն

դրամ նվիրատվություն եւ 243 հազար դրամ սխալ փոխանցված գումարի վերադարձ: Ծախսերը գերազանցել են 14 մլն դրամը. 5 մլն 500 հազար դրամ ծախսվել է գաղափարախոսական կույրերի տարածման համար, 6 մլն 54 հազար 667 դրամ՝ գույքի վարձակալության, 1 մլն 529 հազար 821 դրամ՝ կոմունալ վճարների, իսկ 1 մլն 335 հազար դրամ՝ հարկերի համար: Հաշվին մնացել է 731 հազար 484 դրամ:

«Նոր դարաշրջան» կուսակցությունը ստացել է 17 հազար 709 դրամ որպես սխալ փոխանցված գումարի վերադարձ: Ծախսերը կազմել են ավելի քան 4 մլն 154 հազար դրամ, այդ թվում՝ 2 մլն 800 հազար դրամ գույքի վարձակալության, 799 հազար 128 դրամ աշխատավարձերի եւ ծառայությունների վճարների, 534 հազար 200 դրամ հարկերի եւ 21 հազար 600 դրամ առողջապահական ապահովագրության համար: Մնացորդը՝ 375 հազար 65 դրամ:

«Ժողովրդավարական համախմբում» կուսակցությունը ստացել է 50 հազար դրամ նվիրատվություն, սակայն կատարել է 5 մլն 800 հազար դրամ ծախս, որից 5 մլն դրամը փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, իսկ 800 հազար դրամը՝ գույքի վարձակալության համար: Մնացորդը կազմել է ընդամենը 96 հազար դրամ:

«Հայ ազգային կոնգրես» ստացել է 4 մլն 300 հազար դրամ նվիրատվություն՝ 7 անձից: Ծախսերից 3 մլն 800 հազար դրամը փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, իսկ 54 հազար դրամը՝ կոմունալ վճարների համար: Մնացորդը կազմել է 1 մլն 38 հազար 197 դրամ:

«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը ստացել է 3 մլն 960 հազար դրամ նվիրատվություն՝ 5 անձից: Ծախսվել է 2 մլն 807 հազար 690 դրամ, որից 1 մլն 900 հազար դրամը փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, 753 հազար 690 դրամը՝ Ֆեյսբուքի գովազդի, իսկ 150 հազար դրամը՝ հարկերի համար: Մնացորդը կազմել է 2 մլն 404 հազար 53 դրամ:

«Միասնության թեւեր» կուսակցությունը ստացել է 3 մլն դրամ նվիրատվություն եւ 6 հազար դրամ հետվերադարձ: 2 մլն 500 հազար դրամ փոխանցվել է նախընտրական հիմնադրամ: Մնացորդը կազմել է 500 հազար 506 դրամ:

«Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցությունը ստացել է 134 հազար դրամ նվիրատվություն՝ 6 անձից եւ 110 հազար 498 դրամ ծախսել Ֆեյսբուքի գովազդի համար: Մնացորդը կազմել է 224 հազար 502 դրամ:

Հայաստանի շնորհապետական կուսակցությունը ստացել է 650 հազար դրամ նվիրատվություն եւ 21 հազար դրամ անդամավճար: 1 մլն 490 հազար դրամ փոխանցվել է նախընտրական հիմնադրամ՝ 4 փոխանցումով: Մնացորդը կազմել է 235 հազար 15 դրամ:

«Ազգային ժողովրդավարական բեւեռ» համահայկական կուսակցությունը ստացել է 900 հազար դրամ նվիրատվություն՝ 2 անձից եւ 500 հազար դրամ փոխանցել նախընտրական հիմնադրամ, որից 200 հազար դրամը՝ մայիսի 19-ին: Մնացորդը կազմել է 430 հազար 900 դրամ:

Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցությունը ֆինանսական մուտքեր չի ունեցել, սակայն կատարել է 220 հազար 200 դրամ ծախս՝ բուլլետների պատվերի եւ այլ վճարների համար: Հաշվին մնացել է 3 հազար 301 դրամ:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը մուտքեր չի ունեցել, սակայն կատարել է 110 հազար դրամ ծախս, այդ թվում՝ 100 հազար դրամ Մարալիկում վարձակալության վճարի եւ 10 հազար դրամ տեղեկանքի տրամադրման վճարի համար: Մնացորդը կազմել է 2 մլն 578 հազար 296 դրամ:

«Դեմոկրատիա օրենք կարգապահություն» կուսակցությունը ստացել է 547 հազար 500 դրամ նվիրատվություն՝ 2 անձից եւ ծախսեր չի իրականացրել: Մնացորդը կազմել է 579 հազար 100 դրամ:

Ռեֆորմիստների կուսակցությունը մուտքեր չի ունեցել, սակայն 100 հազար դրամ փոխանցել է նախընտրական հիմնադրամ, իսկ հաշվին մնացել է 3 հազար դրամ:

«Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը կատարել է միայն 2 հազար դրամ սպասարկման վճար, իսկ հաշվին մնացել է 37 հազար 820 դրամ:

«Քոչարի ազգային վերածնունդ եւ ազգի զարթոնք» կուսակցությունը նշված ժամանակահատվածում որեւէ մուտք կամ ելք չի ունեցել:

«Միավորված հայեր» կուսակցությունը նշված ժամանակահատվածում ընդհանրապես բանկային հաշիվ չի ունեցել:

Այսպիսով, հրապարակված տվյալներից երեւում է, որ ամենամեծ ֆինանսական հոսքերը գրանցվել են «Ուժեղ Հայաստան», «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Առաջ աջակցություն» կուսակցություններում: Մի շարք ուժեր հիմնականում գումարներ են ուղղել նախընտրական հիմնադրամներին, իսկ զգալի ծախսեր կատարվել են նաեւ սոցիալական ցանցերի գովազդի, գույքի վարձակալության եւ քարոզչական կույրերի տարածման համար:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐԸ ԲՊ-Ն Է

ՔԱՐՈՋՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Նախընտրական ֆարգչությունը Երևանում արդեն ակտիվ փուլ է մտել: Տարբեր ֆաղաֆական ուժերի դասառններ կարելի է տեսնել գրեթե ամեն ֆայլափոխի՝ սյուներին, կանգառներին, էլեկտրասուսուփերին, բազմաբնակարան շենքերի վրա եւ այլ համայնքի վայրերում: Ուրու գեղեցիկում նույնիսկ դժվար է հասկանալ՝ որտեղ է ավարտվում ֆաղաֆային միջավայրը եւ սկսվում ֆարգաբավը:



Քաղաքի տարբեր հատվածներում նույն սյան վրա կարելի է տեսնել միանգամից մի քանի քաղաքական ուժերի պաստառներ: Մինչդեռ ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ հանրության համար տեսանելի քարոզչական պաստառներ եւ այլ նյութեր կարող են փակցվել միայն հատուկ առանձնացված վայրերում, վճարովի գովազդային վահանակներում, ընտրական շտաբների վրա, ինչպես նաեւ ֆիզիկական անձանց համաձայնությամբ՝ նրանց պատկանող տարածքներում: Օրենքը միաժամանակ արգելում է քարոզչական նյութերի փակցումը պետական եւ համայնքային շենքերի, բազմաբնակարան շենքերի, հասարակական տրանսպորտի եւ մի շարք այլ վայրերի վրա:

Ճիշդացրե՛ք, արձանագրել խախտումները եւ ինչ պատասխանատվություն է նախատեսված նման դեպքերում:

ԿԸՀ մամուլի խոսնակ Մերա Ղուկասյանը մեզ հետ զրույցում նշեց, որ նման դեպքերում քաղաքացիները պետք է լուսանկարեն խախտումները եւ ուղարկեն հանձնաժողովին: Նրա խոսքով՝ եթե պաստառը տեղադրված է ճանապարհի վայրում, ԿԸՀ-ն արագ կապ է հաստատում համայնքապետարանների հետ, որպեսզի այն ապամոնտաժվի: Նրա խոսքով՝ հիմնական նպատակը խնդիրը հնարավորինս արագ լուծելն է, որպեսզի հարցը տուգանքների չհասնի:

Քաղաքացիներն ինքնուրույն են տպում եւ փակցնում պաստառներ, իսկ կուսակցությունը փորձում է կանխել նման ինքնագործունեությունը: Մելոյանը նաեւ նշեց, որ իրենց քաղաքական ուժը սկզբից փորձել է պահպանել օրենքով սահմանված կարգը՝ անկախ նրանից, թե մյուսներն ինչ խախտումներ են թույլ տվել:

ArmLur.am-ը արձանագրել է մի շարք խախտումներ: Դավթաշեն վարչական շրջանում Եղվարդի խճուղու եւ Տիգրան Պետրոսյան փողոցի հատվածում, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պաստառ է փակցված շինարարական աշխատանքներ իրականացնող շենքի վրա: Գյումրու Մուշ թաղամասում նույն կուսակցության պաստառները տեղադրված են կանգառների եւ սյունների վրա:

Երեւանի քաղաքապետարանի մամուլի խոսնակ Արտյոմ Կարապետյանն էլ ասաց, որ եթե խախտումը նկատում է ԿԸՀ-ն, այդ մասին տեղեկացնում է քաղաքապետարանին, որն էլ իրականացնում է ապամոնտաժումը: Նրա խոսքով՝ եթե խախտումը նկատում է հենց քաղաքապետարանը, պաստառները հեռացվում են տեղում:

Հայաստանի շնորհապետական կուսակցության վարչապետի թեկնածու Գուրգեն Սիմոնյանն էլ մեզ հետ զրույցում նշեց, որ իրենց քաղաքական ուժն ունի ներքին կանոն, համաձայն որի՝ քարոզչական նյութերը պետք է փակցվեն միայն օրենքով թույլատրելի վայրերում: Նրա խոսքով՝ արձանագրված որոշ դեպքեր նույնիսկ կարող են լինել հակաքարոզչության դրսևտորում:

Հարավարեւմտյան թաղամասում Զորավար Անդրանիկի փողոցում, ԲՊ պաստառներ կան բազմաբնակարան շենքերի եւ խանութների վրա: Նոր Նորքի 5-րդ զանգվածում Արտեմ Միկոյան 15 հասցեի հատվածում, կանգառների վրա փակցված են միանգամից մի քանի քաղաքական ուժերի՝ «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Լուսավոր Հայաստան» կուսակցությունների քարոզչական նյութերը: ԲաՖՖու փողոցում Հայաստանի շնորհապետական կուսակցության պաստառները տեղադրված են էլեկտրատուփերի վրա, իսկ «Հայաստան» դաշինքի պաստառները՝ սյունների վրա:

Մենք փորձեցինք կապ հաստատել նաեւ քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ՝ հասկանալու համար՝ արդյոք նրանք տեղյակ են արձանագրված խախտումներից եւ վերահսկում են իրենց քարոզչական թիմերի աշխատանքը: Մեզ հետ զրույցում «Հայաստան» դաշինքի անդամ Մետրոպ Մանուկյանը նշեց, որ խախտում անելը լավ բան չէ, սակայն հավելեց. «Իշխանությունները ամեն տեղ իրականացնում են վարչական ռեսուրսի տոտալ կիրառում»:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչների հետ կապ հաստատել մեզ չհաջողվեց:

Բազմաբնակարան շենքերի վրա քարոզչական նյութեր են արձանագրվել նաեւ «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության դեպքում: Մենք փորձեցինք հասկանալ՝ որ կառույցն է պարտավոր վերահսկել այս գործընթացը:

«Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Գոհար Մելոյանն էլ պարզաբանեց, որ բազմաբնակարան շենքերի դեպքում թույլատրելի է, եթե քաղաքացին իր անձնական տարածքում, օրինակ՝ պատուհանի վրա, փակցնում է քարոզչական նյութ, սակայն մուտքերում կամ ընդհանուր օգտագործման հատվածներում դա արգելվում է: Նրա խոսքով՝ հաճախ քաղաքացիներն ինքնուրույն են տպում եւ փակցնում պաստառներ, իսկ կուսակցությունը փորձում է կանխել նման ինքնագործունեությունը: Մելոյանը նաեւ նշեց, որ իրենց քաղաքական ուժը սկզբից փորձել է պահպանել օրենքով սահմանված կարգը՝ անկախ նրանից, թե մյուսներն ինչ խախտումներ են թույլ տվել:

Թեւեւ քաղաքական ուժերը հաճախ խոսում են օրենքի գերակայությունից, նախընտրական քարոզչության առաջին օրերն արդեն ցույց են տալիս, որ հենց քարոզչական դաշտում բազմաթիվ հարցեր կան: Իսկ մինչ պատասխանատու կառույցները շարունակում են հիմնականում ապամոնտաժումների մասին խոսել՝ առանց հստակ վերահսկողական գործողությունների, քաղաքի հանրային տարածքները շարունակում են լցվել քաղաքական պաստառներով: Տպալորություն է, թե քաղաքական ուժերը մրցում են ոչ միայն ընտրողների ձայների, այլ նաեւ այն հարցում, թե ով ավելի շատ պաստառ կհասցնի փակցնել՝ անկախ օրենքի սահմանափակումներից:

ArmLur.am-ի արձանագրած քարոզչական պաստառների խախտումների հաշվարկով առաջատարն այս պահին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն է:

ԻՐԻՆԱ ԱՏԱՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԳԼԽԱՎՈՐ ՄՊԱՌՆԱԼԻՔ ԵՆ

Միջազգային հանրապետական ինստիտուտի՝ International Republican Institute (IRI) հարցման արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի քաղաքացիների արտաքին քաղաքական ընկալումները միաժամանակ ընդգծում են ինչպես գործընկերային, այնպես էլ սպառնալիքային երկրների շրջանակը: Հարցման համաձայն՝ Հայաստանի քաղաքացիների 39 տոկոսը որպես երկրի կարելորագույն քաղաքական գործընկեր նշել է Ֆրանսիան, 35 տոկոսը՝ Ռուսաստանը, 34 տոկոսը՝ Եվրամիությունը, 29 տոկոսը՝ Իրանը, իսկ 27 տոկոսը՝ ԱՄՆ-ը: Կրաստանը նշել է 18 տոկոսը, Չինաստանը՝ 17 տոկոսը: Թուրքիան ստացել է 4 տոկոս, իսկ Ադրբեջանը եւ Ուկրաինան՝ 3-ական տոկոս: Միեւնույն ժամանակ, հարցվածների 9 տոկոսը նշել է, որ թվարկված երկրներից ոչ մեկը չի դիտարկում որպես կարելոր գործընկեր, իսկ 2 տոկոսը դժվարացել է պատասխանել: Մյուս կողմից՝ նույն հարցման երկրորդ հատվածում քաղաքացիները որպես Հայաստանի ամենամեծ քաղաքական սպառնալիք առաջին հերթին նշել են Ադրբեջանը՝ 73 տոկոս, եւ Թուրքիան՝ 58 տոկոս: Ռուսաստանը որպես սպառնալիք նշել է հարցվածների 32 տոկոսը: ԱՄՆ-ը եւ Ուկրաինան ստացել են 6-ական տոկոս, Կրաստանը 4 տոկոս, ԵՄ-ն 3, Իրանը եւ Ֆրանսիան՝ 2-ական տոկոս, իսկ Չինաստանը՝ 1 տոկոս: Հարցվածների 6 տոկոսը նշել է, որ ոչ մի երկիր սպառնալիք չի համարում, իսկ 3 տոկոսը դժվարացել է պատասխանել: Այսպիսով, հարցման տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի քաղաքացիների ընկալումներում Ֆրանսիան դիտվում է որպես հիմնական գործընկերներից մեկը, մինչդեռ Ադրբեջանն ու Թուրքիան գերակշռում են որպես ամենամեծ քաղաքական սպառնալիքներ: **Ա. Ա.**

ԿՈՂՈՊՈՒՑԻ ԳԵՂՔ

Մայիսի 22-ի գիշերը՝ ժամը 3.15-ին, ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնել էր, որ ժամը 3-ի սահմաններում Օդակաձեւ զբոսայգու հարակից տարածքում երեք օտարերկրացի նախ գումար են խնդրել, ապա համիշտակելով իր դրամապանակը՝ դիմել են փախուստի: Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հարդորումից մեկ ժամ անց Երվանդ Քոչարի փողոցում հայտնաբերել, նշված կողոպուտը կատարելու կասկածանքով ձերբակալել եւ վարչություն են տեղափոխել օտարերկրյա քաղաքացի 41-ամյա տղամարդու: Հետագա միջոցառումների արդյունքում հայտնաբերվել, կողոպուտի կասկածանքով ձերբակալվել եւ վարչություն են տեղափոխվել նաեւ 35-ամյա եւ 45-ամյա օտարերկրյա քաղաքացիները: Նրանք կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել են նախաքննական մարմին: Կատարվում է նախաքննություն:

«ՔՐՈՅՐՍ ԻՆՔՆԱՍՊԱՆ ՉԻ ԵՂԵԼ»

Օրեր առաջ ավտոմեքսից մահացած հղի կնոջ քույրը՝ Վիկտորյան, ֆեյսբուքյան էջում գրել է. «Դեպքի հետ կապված եկել են մեկընդմիջտ փակելու բոլոր ձեր վարկածները, բերաններն ու առաջ քաշելու փաստերը: Մարիաննայիս՝ պիղծ Հայկը պահել է փակի տակ ու օրերով չի գնացել տուն: Ենթարկել է ծեծի ու բռնության, որի մասին քույրս լռել է: Տվյալ օրվա դեպքի հետ կապված՝ քույրս խնդրել է, որ կանգնեցնի մեքենան: Կանգնել է, իջել է աղջկը, իսկ հետեւից այդ խելապակասը վազել է ու մեզերից քարշ տալով տարել մեքենան: Ենթարկել է դաժան ծեծի, որից հետո իրել է մեքենայից... քիմքննության կոտրվածք, վիզ-ոդ-նաշարի վնասվածք, դեմքի կապտուկներ: Մազերն ամբողջությամբ պոկված էին:

Մենք պատրաստվում ենք հողին հանձնել փազլով հավաքած մարմին, որը նախկինում աշխարհի ամենակենսուրախ աղջկան էր:

ՔՐՈՅՐՍ ԻՆՔՆԱՍՊԱՆ ՉԻ ԵՂԵԼ, ԶՐՈՋՍ ՄԻՏՈՒՄՆԱԿՈՐ ՍՊԱՆԵԼ ԵՆ:

Երեխուն դեմքը աղավաղված ու անճանաչելի էր: Ուզում եմ սգաս, տակաք, ուզում եմ ողբաս ու տանջվես: Մեր ցավը քո սատկելը կբթացնի, բայց էլ մեր լույս երեխուն հետ չենք բերի:

Հարյուրավոր աղջիկներ են գրում ինձ, որոնցից մի մասից շանտաժի, մյուս մասից՝ խաբեության շնորհիվ գումարներ է կորզել ու չի վերադարձրել: Չի ունեցել ոչ տուն, ոչ ընտանիք. սեփական մայրն ու քույրը երես են թեթել, ոչ գումար, ոչ մեքենա:

Մեքենաները վերցրել է վարձակալության, գիշերել դրանց մեջ ու աղջիկների խաբել ու որսացել՝ իբրեւ օլիգարխի տղա է: Բայց մի ամբողջ ազգ ճշում է՝ թե դու ինչի՞ տղա ես: Թող ամենաերանելի երագանքը լինի քո իսկ սատկելը, տակաք: Տեղեկացնեմ, որ ինքն ընդունել է մեղքը»:

ArmLur.am-ը հայտնել էր, որ Գեղարքունիքի մարզում մեքենայի մեջ կնոջ անշնչացած մարմին է հայտնաբերվել: Մեքենայում միջադեպ էր եղել ամուսինների միջեւ, եւ նախնական տեղեկություններով՝ մահացած կնոջ ամուսինը պատմել է, որ վիճաբանությունից հետո կինը ասել է, թե մեքենան կբացի եւ իրենց ցած կնետի, որից հետո գնացել է այդ քայլին:

Մահացած կնոջ ամուսինը նոր էր բանտից դուրս եկել:

● Անցած 1 օրում գրանցվել է 9 ավտոմեքս. 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ 11-ԱՄՅԱ

«Պարտադիր կրթությունը դարձնելու ենք 11-ամյա՝ լրացուցիչ 1 տարի նախատեսելով բուհ ընդունվելու պատրաստվելու կամ մասնագիտություն ձեռք բերելու համար»,- այս մասին հայտարարել է «Միասնության թեմեր» կուսակցության վարչապետի թեկնածու Արման Թաթայանը՝ ներկայացնելով կուսակցության կրթական ոլորտի առաջարկները: Պարտադիր կրթությունը դարձնելու ենք 11-ամյա՝ լրացուցիչ 1 տարի նախատեսելով բուհ ընդունվելու պատրաստվելու կամ մասնագիտություն ձեռք բերելու համար: Այս մասին հայտարարել է «Միասնության թեմեր» կուսակցության վարչապետի թեկնածու Արման Թաթայանը՝ ներկայացնելով կուսակցության կրթական ոլորտի առաջարկները:

Արման Թաթայանը նշել է, որ «Միասնության թեմեր»-ի ծրագրով դպրոցները չեն փակվելու, հատկապես սահմանամերձ համայնքներում կրթական համակարգը զարգացվելու է եւ ամրապնդվելու: Նա առաջարկել է նաեւ դպրոցների կառավարումը փոխանցել համայնքներին, ինչպես նաեւ ապահովել, որ ատեստավորում չհանձնող երեւելուսուցիչ չզրկվի աշխատանքից:

Կրթական ծրագրով նախատեսվում են նաեւ հատուկ աջակցության մեխանիզմներ գյուղական համայնքների ուսուցիչների համար՝ մինչեւ Օ տոկոսանոց վարկեր, մեկնարկային ֆինանսավորում, ինչպես նաեւ երկարաժամկետ աշխատանքի դեպքում բնակարանի, հողամասի կամ միանվագ աջակցության տրամադրում: «Արդարությունը գալիս է, որպեսզի երիտասարդի հաջողությունը կախված լինի գիտելիքից եւ աշխատասիրությունից», - նշել է Արման Թաթայանը՝ քաղաքացիներին կոչ անելով հունիսի 7-ին քվեարկել «Միասնության թեմեր» կուսակցության օգտին: (Գ)

ՄԵԿՆԻՐ ՓԱՐԻԶ

2026թ. դեկտեմբերին Յունիբանկը կհայտարարի Love Is... քարտապանների միջեւ անցկացվող խաղարկության հաղթողին եւ կվճարի ռոմանտիկ ճանապարհորդություն դեպի Փարիզ: Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է ձեռք բերել Յունիբանկի Love Is... քարտ եւ մինչեւ 2026 թվականի դեկտեմբերի 1-ը կատարել ամսվազն մեկ գործարք:

Love Is... քարտերի շարքը հասանելի է չորս դիզայնով՝ ռեզնյակաձև հայտնի նկարազարդումներից, որոնք սերունդների համար դարձել են իրական զգացմունքների համաշխարհային խորհրդանիշ: Յունիբանկի Love Is... քարտերը բազմաթիվ ժողովրդային են. քարտին կցված են հաշիվներ 33 դրամով, ԱՄՆ դոլարով եւ Եվրոյով, ինչը հատկապես հարմար է արտերկրում վճարումներ կատարելիս: Քարտերի օրական սահմանափակում կազմում է մինչեւ 2.5 մլն դրամ: Քարտապաններին տրամադրվում են մրբայլ հավելված, անվճար SMS-ծանուցումներ եւ շուրջօրյա աջակցություն:

Մինչեւ 2026թ. հունիսի 30-ը՝ շաբաթ եւ կիրակի օրերին, քարտերը կարելի է ձեռակերպել 50% զեղչով Յունիբանկի «Գարեգին Նժդեհ» եւ «Դավա» մասնաճյուղերում, որոնք գտնվում են համապատասխանաբար Yerevan Mall եւ Dalma Mall առևտրի կենտրոններում: Չեղջի կիրառվում է քարտի տրամադրման սակագնի նկատմամբ եւ նախատեսված է 33 ռեզիդենտ անձանց համար: (Գ)

AEB

«ԲԱՆԿԻՆ ԱՅԼԵՎԱ ՊԱՐԶԱՊԵՍ ՎԱՐԿԱՏՈՒ ԶԷ»

Այսօր բանկային համակարգը թեւակոխել է մի փուլ, որտեղ հաճախորդի համար առաջնային են դառնում ոչ միայն թվային լուծումներն ու արագությունը, այլեւ բանկի հեռավարական գործընկերությունը:

Հայէկոնոմբանկի Գործադիր տնօրենի կորպորատիվ եւ մանրածախ բիզնեսի գծով տեղակալ Օնիկ Զիջյանը խոսել է այն մասին, թե ինչպես է փոխվում վարկային շուկան Հայաստանում, ինչ գործիքներով է բանկը զսպում հնարավոր ռիսկերը եւ զարգացման ինչ միտումներ են կանխատեսվում առաջիկայում:

Ի՞նչն են այսօր առաջնային համարում տնտեսվարողները բանկի ընտրության հարցում. արդյո՞ք միայն տոկոսադրույքն է որոշիչ, թե՛ կարելի է նաեւ այլ հանգամանքներ:

Իրականում բանկի ընտրությունն այսօր շատ բազմաշերտ է. իհարկե, տոկոսադրույքը շարունակում է մնալ կարևոր գործոն, բայց այն այլևս միակ է հաճախ նույնիսկ առաջնային որոշիչը չէ: Մեր փորձը ցույց է տալիս, որ գործարար աշխարհում այսօր առավելագույնս արժեւորվում են՝

- սպասարկման արագությունը. բիզնեսում ժամանակը փող է, եւ վարկի հաստատման ու տրամադրման սեղմ ժամկետները հաճախ ավելի կարևոր են, քան տոկոսադրույքի չնչին տարբերությունը:
- ճկունությունը. մենք տեսնում ենք պահանջարկ այնպիսի պայմանների, որոնք հարմարեցված են կոնկրետ բիզնեսի առանձնահատկություններին՝ լինի դա մարման անհատական գրաֆիկ, թե ապահովման միջոցների բազմազանություն:
- անհատական մոտեցումը եւ խորհրդատվությունը. տնտեսվարողն այսօր բանկից ակնկալում է ոչ միայն ֆինանսավորում, այլեւ մասնագիտական աջակցություն՝ բիզնեսի աճին նպաստող ճիշտ լուծումներ գտնելու հարցում:

Կարճ ասած՝ բանկի ավանդական ընկալումը փոխվել է. մենք այլևս պարզապես վարկատու չենք, այլ ռազմավարական գործընկեր, որը կանգնած է բիզնեսի կողքին նրա զարգացման յուրաքանչյուր փուլում:

Խոսելով գործընկերության մասին՝ չենք կարող չանդրադառնալ նաեւ անվտանգությանը: Որո՞նք են այսօր բանկի համար կորպորատիվ վարկավորման հիմնական ռիսկերը, եւ ինչպե՞ս է բանկին հաջողվում պահպանել հավասարակշռությունը՝ մի կողմից աջակցելով բիզնեսին, մյուս կողմից՝ կիրառելով վարկունակության գնահատման գործիքակազմը:

Սա թերեւս բանկային գործունեության ամենապատասխանատու հատվածն է: Ներկա տնտեսական փոփոխական պայմաններում կորպորատիվ ռիսկերը տարաբնույթ են: Մենք առանձնացնում ենք մի քանի հիմնական ուղղություններ՝ շուկայական տատանումները (արժույթային եւ պահանջարկի փոփոխություն), հաճախորդի դրամական հոսքերի անկայունությունը եւ, իհարկե, արտաքին տնտեսական ազդեցությունները:

Այս ռիսկերը զսպելու եւ առողջ վարկային պորտֆել ունենալու համար մենք կիրառում ենք համալիր մոտեցում: Նախեւառաջ, իրականացվում է խորքային վերլուծություն. հաճախորդի



վարկունակությունը գնահատելիս մենք չենք սահմանափակվում միայն ֆինանսական հաշվետվություններով: Մենք վերլուծում ենք բիզնես մոդելի կայունությունը, կանխատեսում ենք դրամական հոսքերը եւ գնահատում ենք տվյալ ոլորտի զարգացման հեռանկարները: Կիրառվում է ժամանակակից գործիքակազմ. որոշումների կայացման հիմքում ընկած են վարկային սքորինգային համակարգերը եւ պարբերական սթրես-թեստավորումը, ինչը թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես կպահի իրեն բիզնեսը տնտեսական տարբեր սցենարների դեպքում: Իրականացվում է պորտֆելի շարունակական դիվերսիֆիկացիա եւ մշտադիտարկում. մենք խուսափում ենք միայն մեկ ոլորտի վրա կենտրոնացումից եւ իրականացնում ենք շուրջօրյա մոնիթորինգ, ինչը հնարավորություն է տալիս կանխատեսել խնդիրները դեռ դրանց ի հայտ գալու սկզբնական փուլում: Մեր նպատակն է ոչ թե պարզապես վարկ տրամադրել, այլ վստահ լինել, որ այդ ֆինանսավորումը բիզնեսին օգնելու է աճել, այլ ոչ թե լրացուցիչ բեռ դառնալ:

Իսկ ի՞նչ ոլորտային առաջնահերթություններ ունի Հայէկոնոմբանկը եւ ինչպե՞ս են այդ առաջնահերթությունները հատվում Հայաստանի տնտեսական զարգացման միտումների հետ: Հայէկոնոմբանկի՝ որպես բանկային հատվածի կարևոր դերակատարի ոլորտային առաջնահերթությունները չեն կարող սերտորեն կապված չլինել Հայաստանի տնտեսական զարգացման ռազմավարության հետ: Մենք կենտրոնացած ենք այն ճյուղերի զարգացման վրա, որոնք ապահովում են երկարաժամկետ աճ եւ մրցունակություն: Դրանք են արտադրությունը եւ վերամշակումը, գյուղատնտեսությունը, ՏՏ եւ նորարարության ոլորտը, էներգետիկան, հատկապես վերականգնվող էներգիայի աղբյուրների զարգացումը:

Այս ամենի կենտրոնում, իհարկե, ՓՄՁ-ների վարկավորումն է: Փոքր եւ միջին ձեռնարկատիրությունը մեր տնտեսության ողնաշարն է. այն ապահովում է զբաղվածության մեծ մասը եւ ունի աճի ամենաբարձր ներուժը: Ուստի, աջակցելով ՓՄՁ-ներին, մենք նպաստում ենք երկրի ընդհանուր տնտեսական կայունությանը:

Մեզ համար շատ կարևոր է նաեւ կանաչ ձեռներեցության խթանումը եւ կանաչ ծրագրերի վարկավորումը: Այս հեռանկարային ուղղությունները զարգացնելու համար մենք կիրառում ենք գործիքների լայն գիտանոց՝ արտոնյալ տոկոսադրույքներից մինչեւ երաշխիքային մեխանիզմներ եւ ֆինանսական կրթության ծրագրեր:

Այս հարցում առանձնահատուկ ուզում ենք կարելի մեր համագործակցությունը միջազգային հեղինակավոր գործընկերների հետ, ինչպիսիք են՝ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (EBRD) եւ Սեւծովյան առևտրի եւ զարգացման բանկը (BSTDB): Մենք իսկապես հպարտ ենք, որ հնարավորություն ունենք միջազգային լավագույն փորձն ու ֆինանսական միջոցները հասանելի դարձնել մեր հաճախորդներին:

Մեզ համար շատ կարևոր է նաեւ կանաչ ձեռներեցության խթանումը եւ

կանաչ ծրագրերի վարկավորումը: Այս հեռանկարային ուղղությունները զարգացնելու համար մենք կիրառում ենք գործիքների լայն գիտանոց՝ արտոնյալ տոկոսադրույքներից մինչեւ երաշխիքային մեխանիզմներ եւ ֆինանսական կրթության ծրագրեր:

Այս հարցում առանձնահատուկ ուզում ենք կարելի մեր համագործակցությունը միջազգային հեղինակավոր գործընկերների հետ, ինչպիսիք են՝ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (EBRD) եւ Սեւծովյան առևտրի եւ զարգացման բանկը (BSTDB): Մենք իսկապես հպարտ ենք, որ հնարավորություն ունենք միջազգային լավագույն փորձն ու ֆինանսական միջոցները հասանելի դարձնել մեր հաճախորդներին:

Անցում կատարելով մանրածախ շուկային՝ որո՞նք են բանկի առաջնահերթությունները մանրածախ վարկավորման ոլորտում: Ինչպե՞ս է թվայնացումն այսօր փոխում այս գործընթացը:

Մանրածախ վարկավորման ոլորտում մեր գլխավոր առաջնահերթությունը հաճախորդի համար առավելագույն հարմարավետության եւ հասանելիության ապահովումն է: Թվայնացումն արմատապես փոխել է ֆիզիկական անձանց վարկավորումը՝ բանկային սրահներից տեղափոխելով այն հաճախորդի սմարթֆոն: Ավտոմատացված համակարգերի շնորհիվ վարկային ծառայությունները 24/7 ռեժիմով հասանելի են դարձել հաճախորդին: Ուղղորդում, վարկային հայտի վերաբերյալ որոշումը կայացվում է րոպեների ընթացքում: Աղյուսեցում, ֆիզիկական բանկ այցելելու անհրաժեշտությունը հասցվել է նվազագույնի: Սա թույլ է տվել նաեւ նվազեցնել գործառնական ծախսերը, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս հաճախորդին առաջարկել ավելի մրցունակ եւ շահավետ տոկոսադրույքներ:

Ի վերջո, մեր նպատակն է լինել հուսալի թվային ուղեկից յուրաքանչյուր հաճախորդի համար:

Ամփոփելով մեր գրույքը՝ խնդրում ենք նշել, թե վարկային շուկայի զարգացման ի՞նչ տեսլական ունի Հայէկոնոմբանկն առաջիկա տարիների համար:

Հայաստանի վարկային շուկան այսօր գտնվում է տրանսֆորմացիայի հետաքրքիր փուլում, եւ մենք տեսնում ենք շուկայի զարգացումը 4 հիմնական ուղղություններով՝

- թվային հարթակների առաջանցիկ զարգացում եւ նորարարություն,
- անհատականացված մոտեցում, որը թույլ կտա առաջարկել լուծումներ, որոնք անհրաժեշտ են տվյալ բիզնեսին կամ անհատին,
- կանաչ ֆինանսավորում
- եւ հաստատուն աջակցություն ՓՄՁ-ներին:

Հայէկոնոմբանկի զարգացման տեսլականը հիմնված է հավասարակշռության վրա՝ ամրապնդել տարիների ընթացքում վաստակած վստահությունը եւ շարունակել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը: Կարելի է ասել, որ վստահության վարկավորումը մենք չենք ձգտում պարզապես մեծացնել թվերը, մեր նպատակն է, որ յուրաքանչյուր տրամադրված վարկ լինի հիմնավորված եւ իրապես նպաստի հաճախորդի բարեկեցությանը:

86 86 | aeb.am

«Պողոկոս» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:



ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով են արտահանվում մեակուրային արժեքներն ու մեակուրային նշանակության առարկաները ՀՀ-ից:

Գայանե Հովակիմյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ.

«Համաձայն ՀՀ օրենսդրության եւ իրավական ակտերի ՀՀ տարածքից յուրաքանչյուր ոք կարող է արտահանել կամ ժամանակավոր արտահանել իր սեփականությունը համարվող մշակութային արժեքները՝ միայն մշակութային արժեքների արտահանման լիցենզիայի (եզրակացության) կամ ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացության (թույլատրող փաստաթղթի) հիման վրա, որի համար գանձվում է պետական տուրք (հաստատագրված 5000 դրամ անկախ արժեքների քանակից): Պետական սեփականություն համարվող մշակութային արժեքները ՀՀ օրենսդրության համաձայն թույլատրվում է արտահանել միայն ժամանակավորապես՝ ցուցահանդեսներ կազմակերպելու, վերականգնման աշխատանքներ եւ գիտական հետազոտություններ կատարելու, թատերական եւ համերգային գործունեություն իրականացնելու նպատակով: 50 տարուց ավելի վաղեմության մշակութային արժեքներ արտահանելու համար անհրաժեշտ է նախ դրանք ներկայացնել մշակութաբանական եւ արվեստաբանական փորձաքննության, որից հետո արտահանողի անձնագրի պատճենի, այդ փորձագիտական եզրակացությունների եւ վերջիններիս կից 3 օրինակ լուսանկարների հիման վրա նախարարության կողմից կկատարվեն արտահանման ձեւակերպումներ: Մինչեւ 50 տարվա վաղեմության առարկաների (բացառությամբ ՀՀ կառավարության 2025 թ. ապրիլի 10-ի N 401-Վ որոշմամբ հաստատված վերջին 50 տարում մահացած հեղինակների), արտահանումն իրականացվում է պարզեցված կարգով, եթե այդ առարկաները թվագիր են եւ առկա է հեղինակի ստորագրությունը, ապա կարելի է արտահանել առանց գործակալության թույլտվության՝ անմիջապես մաքսակետերից: Սակայն քաղաքացու ցանկությամբ, գործակալությունը կարող է կատարել արտահանման թույլտվության ձեւակերպում, եթե ներկայացվում է արտահանվող առարկան եւ դրա 3 օրինակ գունավոր, 10*15 չափսի լուսանկարը: Մշակութային նշանակության առարկաների թույլտվությունը տրվում է վավերացված լուսանկարի միջոցով (հայերեն, ռուսերեն եւ անգլերեն) եւ այդ ծառայությունն անվճար է: Մինչեւ 50 տարի վաղեմության առարկաները, եթե արտահանվում են փոստային առաքմամբ կամ ցամաքային տարանցիկ ճանապարհով, ապա նախարարության կողմից տրված թույլտվությունը պարտադիր է: Եզրակացությունը (թույլատրող փաստաթուղթը) տրամադրվում է յուրաքանչյուր այն մշակութային արժեքի համար, ըստ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրի (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱՎ ծածկագիր), որի համար կիրառվում է արտահանման սահմանափակում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2015 թ. ապրիլի 21-ի N 30 որոշման 2.20-րդ բաժնի համաձայն:

ՀՀ ԿԳՄՍ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍՎՈՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հեաբրիբ է իմանալ, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ, որոնցով հնարավոր լինի լիցենզիա ստանալ:

Հայկ Գալստյան, 61 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ.

Լիցենզիայի ձեւակերպման համար հայտատուն trade.gov.am հարթակի «Թույլատվական փաստաթղթեր» համակարգի միջոցով, իսկ թղթային եղանակով դիմելու դեպքում՝ ՀՀ ԱԾ տնօրենի անունով կից գրությամբ, ներկայացնում է հետեւյալ փաստաթղթերը եւ տեղեկությունները.
 1) ԵՏՀ Կոլեգիայի 24 նոյեմբերի 2023թ. N 125 որոշմամբ հաստատված Հրահանգին համապատասխան կազմված լիցենզիա ստանալու մասին հայտը,
 2) հայտի էլեկտրոնային օրինակը (ցանկացած կրիչով)՝ հայտը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում,
 3) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման լիցենզիայի պատճենը՝ եթե գործունեության այդ տեսակը կապված է տվյալ ապրանքի շրջանառության հետ,
 4) պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ ծանուցման մեջ նշում է գեներացված անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը,
 5) հայտատուի գրավոր ծանուցումը՝ ծածկագրային (կրիպտոգրաֆիկական) միջոցների կազմում Միասնական ցանկի 2.16 բաժնով նախատեսված քաղաքացիական նշանակության ռադիոէլեկտրոնային միջոցների եւ (կամ) բարձր հաճախականության սարքավորումների բացակայության մասին, իսկ դրանց առկայության դեպքում՝ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթի պատճենը,
 6) ծածկագրային (կրիպտոգրաֆիկական) միջոցի տեխնիկական փաստաթղթերը
 7) արտաքին առևտրային պայմանագրի, դրան կից հավելվածների եւ (կամ) դրանցում կատարված լրացումների պատճենները, իսկ արտաքին առևտրային պայմանագրի բացակայության դեպքում՝ Կողմերի մտադրությունը հաստատող այլ փաստաթղթերի պատճենները:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի



Նոր Նորքի շենքերից մեկի բակում կայանված «Mercedes»-ում հրդեհ է բռնկվել. ոստիկաններն ունեն կասկածներ, որ այն միտումնավոր հրկիզել են:

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել



«Հայփոստ» ՊՓԲԸ
 հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
 հեռ. 52-53-01

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդորդառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
 Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
 Ազգանուն՝ _____
 Առաքման հասցե՝ _____
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



☀	Շիրակ	+3 + 7 +15 + 18
☀	Կոտայքի լեռներ	+2 + 6 +14 + 17
☀	Կոտայքի նախալեռներ	+9 + 11 +20 + 21
☀	Գեղարքունիք	+3 + 7 +15 + 18
☀	Լոռի	+4 + 8 +17 + 21
☀	Տավուշ	+6 + 9 +18 + 21
☀	Արագածոտնի լեռներ	+2 + 6 +13 + 16
☀	Արագածոտնի նախալեռներ	+9 + 13 +19 + 23

☀	Արարատ	+10 + 14 +22 + 25
☀	Արմավիր	+11 + 14 +23 + 27
☀	Վայոց ձորի լեռներ	+2 + 6 +13 + 16
☀	Վայոց ձորի նախալեռներ	+10 + 14 +22 + 26
☀	Սյունիքի լեռներ	+2 + 6 +13 + 16
☀	Սյունիքի նախալեռներ	+6 + 10 +16 + 19
☀	Սյունիքի հովիտներ	+12 + 16 +24 + 27
☀	Երեւան	+12 + 14 +24 + 26

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
 Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086
 տրված է 24.11.2010
 Ստորագրված է տպագրության 25.05.2026
 Տպաքանակ՝ 3968

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
 Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: